

Լիզինգային ֆինանսավորման հատուկ պայմաններ
Տեղեկատվական ամփոփագիր

20.09.2016

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հետ համագործակցող ընկերություններից (այսուհետ՝ Ընկերություն) սարքավորումների ձեռքբերման լիզինգային ֆինանսավորումը (այսուհետ՝ Լիզինգ) տրամադրվում է հետևյալ պայմաններով.

Ընկերությունների ցանկ	«Գեո-Նալ Սպասարկման կենտրոն» ՍՊԸ «Օպտո Լավ» ՍՊԸ
Լիզինգի առարկա	Բժշկական և ինժեներական սարքավորումներ

Տարեկան տոկոսադրույք		
Ժամկետ	ԱՄ դոլար Եվրո	ՀՀ դրամ
12 ամիս	4 %	9 %
24 ամիս	5 %	10 %
36 ամիս	6 %	11 %

Լիզինգի գումար	Ձեռք բերվող սարքավորման արժեքի 70%
Հայտի դիտարկման վճար	0 ՀՀ դրամ
Լիզինգի տրամադրման վճար	0 ՀՀ դրամ

Այլ պայմանները՝ համաձայն Բանկի Լիզինգի պայմանների:

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber: +374 95 511 211
- Skype: conversebank-callcenter

Ֆինանսական վարձակալություն – Լիզինգ
Տեղեկատվական ամփոփագիր

20.09.2016

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից տրամադրվող ֆինանսական վարձակալություն ծառայությունն (այսուհետ՝ Լիզինգ) իրենից ներկայացնում է իրավաբանական անձանց դեպքում՝ ձեռնարկատիրական, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնական կարիքների համար հաճախորդի կողմից ընտրված գույքի Բանկի կողմից ձեռքբերում և տրամադրում Յաճախորդին վարձակալությամբ՝ որոշակի ժամկետով և որոշակի վարձավճարի՝ լիզինգավճարի դիմաց: Յաճախորդի կողմից պայմանագրային բոլոր ստանձնած պարտավորությունները կատարելու դեպքում ժամկետի վերջում լիզինգի առարկայի/գույքի սեփականության նկատմամբ իրավունքը կարող է անցնել հաճախորդին:

Լիզինգի հաճախորդ

Լիզինգի հաճախորդ (այսուհետ՝ Յաճախորդ) կարող է հանդիսանալ ցանկացած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, ՅՎՅՆ ունեցող անձ, իսկ ազրոլիզինգավորման դեպքում՝ նաև ֆիզիկական անձ, ինչպես նաև ֆիզիկական անձանց խումբ, իսկ եթե Լիզինգի առարկան օգտագործվելու է ՅՅ տարածքում, ապա կարող է լինել նաև ՅՅ ոչ ռեզիդենտ կազմակերպություն կամ անձ:

Լիզինգի առարկա

Լիզինգի առարկա կարող են հանդիսանալ մեքենաներ, սարքավորումներ, անշարժ գույք, որոնք անհրաժեշտ են Յաճախորդների ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելու ընթացքում (իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնական օգտագործման համար), որոնք Յաճախորդի կողմից ընտրվել և ներկայացվել են Բանկին, և վերջինիս կողմից ձեռքբերման և Յաճախորդին վարձակալությամբ հանձման նպատակով: Բանկը պատասխանատվություն չի կրում Լիզինգի առարկայի և վաճառողի ընտրության համար: Միևնույն ժամանակ պայմանագրերով կարող է նախատեսվել, որ վաճառողի ընտրությունը կատարում է Բանկը:

Լիզինգի պայմաններ

Լիզինգի ժամկետ	Ավտոմեքենա, սարքավորումներ – առավելագույնը 5 տարի Անշարժ գույք – առավելագույնը 10 տարի
Լիզինգի արժույթ	<p>ՅՅ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ընդ որում՝ Լիզինգի գործարքները կարող են իրականացվել և գնանշվել.</p> <p>ՅՅ դրամով կամ արտարժույթով, երբ կնքվում են՝</p> <ol style="list-style-type: none"> 1. իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հետ, 2. գյուղատնտեսական վարկային ակումբների, գյուղացիական տնտեսությունների կամ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց հետ՝ նրանց գյուղատնտեսական գործունեության ֆինանսավորման նպատակով, 3. ֆիզիկական անձանց հետ՝ լիզինգի պայմանագրի առարկան անշարժ գույք լինելու դեպքում: <p>Բացառապես ՅՅ դրամով, երբ կնքվում են գյուղատնտեսական գործունեությամբ չզբաղվող ֆիզիկական անձանց հետ:</p>

Վճարներ

Հայտի դիտարկման վճար	10 000 ՀՀ դրամ, գանձվում է հայտը ներկայացնելիս
Կանխավճար	<p>Նվազագույնը – 20%</p> <p>ՀՀ ոչ ռեզիդենտների կամ ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում – 40%</p>
Լիզինգի տրամադրման վճար	<p>Նվազագույնը</p> <p>Իրավաբանական անձանց համար – 50 000 ՀՀ դրամ</p> <p>Ֆիզիկական անձանց համար – 30 000 ՀՀ դրամ</p> <p>Կախված գործարքի յուրահատկությունից և լիզինգի առարկայի ձեռքբերման պայմաններից կարող է սահմանվել ավելի բարձր վճար:</p>
Լիզինգավճար	<p>Որպես կանոն, լիզինգավճարը վճարվում է ամսական պարբերականությամբ:</p> <p>Անկախ հաշվարկվող արժույթից, լիզինգավճարը ենթակա է վճարման ՀՀ դրամով:</p> <p>Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ լիզինգավճարի վրա:</p> <p>Հաճախորդը կարող է կատարել վաղաժամկետ մարում՝ Բանկին վճարելով պայմանագրով սահմանված վճարներն ամբողջությամբ:</p>
Վերջնական վճար	<p>Վճարվում է հիմնական լիզինգային պայմանագրի ժամկետի ավարտին:</p> <p>Վճարման դեպքում լիզինգի առարկայի սեփականության իրավունքն անցնում է Հաճախորդին:</p> <p>Սահմանվում է գույքի ձեռքբերման գնի 0.1%-ից մինչև 25%-ը:</p>
Հավելյալ վճարներ	<p>Լիզինգի առարկայի գնահատման, ապահովագրության, գրանցման, լիզինգային իրավունքի գրանցման, ինչպես նաև հետագա օգտագործման ընթացքում Բանկի կողմից կատարվելիք բոլոր ծախսերը (օրինակ, ավտոմեքենայի տեխ. զննության, և բնապահպանական վճարներ, գույքահարկ և այլն) ենթակա են փոխհատուցման Հաճախորդի կողմից առաջին իսկ պահանջի դեպքում կամ ենթակա են կատարման Հաճախորդի կողմից Բանկի անունից՝ հօգուտ Բանկի:</p>

Ապահովագրություն, ապահովում և ենթալիզինգ

<p>Ապահովագրություն</p>	<p>Ավտոմեքենաների ապահովագրությունը պարտադիր է, եթե այլ բան նախատեսված չէ ֆինանսավորման հաստատման արձանագրությունում:</p> <p>Սարքավորումների, գյուղ. տեխնիկայի, այլ շարժական գույքի ապահովագրության պահանջ կարող է ներկայացվել կախված այդ գույքի կիրառման ոլորտից և պայմաններից, որը պետք է արտացոլվի համապատասխան արձանագրությունում, հակառակ դեպքում գույքը ենթակա չէ ապահովագրման:</p> <p>Անշարժ գույքը ենթակա չէ ապահովագրման, եթե այլ բան նախատեսված չէ հաստատման արձանագրությամբ:</p> <p>Ապահովագրությունը իրականացվում է Բանկի հետ համագործակցող ընկերություններում, որպես Բանկի գույքի ապահովագրություն սահմանելով այլ լիազորված օգտագործող:</p>
<p>Ապահովում</p>	<p>Հաճախորդի կողմից ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով Բանկը կարող է պահանջել լրացուցիչ ապահովում, այդ թվում՝ երաշխավորություններ:</p>
<p>Ենթալիզինգի / ենթավարձակալության թույլտվություն</p>	<p>Բանկի նախնական գրավոր համաձայնությամբ</p>

Տոկոսադրույք

Ուշադրություն. Նշված տոկոսադրույքները հանդիսանում են նվազագույն ուղեցույցային սահման: Փաստացի առաջարկվող տոկոսադրույքները ենթակա են համապատասխանեցման յուրաքանչյուր ֆինանսավորման համար՝ հիմք ընդունելով ֆինանսավորման նպատակը, կառուցվածքը, հաճախորդի նկարագիրը, ֆինանսական ու ռիսկային գնահատականները և այլ չափանիշներ:

Լիզինգի տեսակ	Արժույթ	Տարեկան տոկոսադրույք Ծրագրային / Սեփական միջոցներ
<p>Շարժական գույքի, սարքավորումների լիզինգ</p>	ՀՀ դրամ	14% / 20%
	ԱՄՆ դոլար	14%
	Եվրո	12%
<p>Անշարժ գույքի լիզինգ</p>	ՀՀ դրամ	14% / 20%
	ԱՄՆ դոլար	14%

Լիզինգավճարի հաշվարկման օրինակ

Լիզինգավճարը հաշվարկվում է տարեկան տոկոսադրույքի հիման վրա:
 Տոկոսադրույքը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ:

Հետևյալ պայմաններով Լիզինգի դեպքում՝

Լիզինգի գումար	100 000 ԱՄՆ դոլար
Տարեկան տոկոսադրույք	14%
Լիզինգի ժամկետ	5 տարի

Լիզինգավճարը կկազմի՝

Ամսական լիզինգավճար	2 326.83
Ընդհանուր լիզինգավճար	139 609.51

Տույժեր և տուգանքներ

Բանկի հայեցողությամբ կարող են կիրառվել հետևյալ տույժերն ու տուգանքները.

1. ժամկետանց ֆինանսավորման 0,15 տոկոսի չափով ուշացման յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար, իսկ 5 (հինգ) աշխատանքային օր անընդմեջ ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց վարկի 2 տոկոսի չափով, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ:
2. ժամկետանց ֆինանսավորման տոկոսագումարի 0,4 տոկոսի չափով յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար, իսկ 5 (հինգ) աշխատանքային օր անընդմեջ ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք ժամկետանց տոկոսագումարի 5 տոկոսի չափով, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ:
3. ֆինանսավորման տրամադրման համար սահմանված նախապայմաններից յուրաքանչյուրի խախտման դեպքում՝ միանվագ տուգանք 50 000-ից մինչև 100 000 ՀՀ դրամի չափով:
4. գրավադրվող գույքի ապահովագրության պահանջի դեպքում ապահովագրական պոլիսի (վկայագրի) օրինակը Բանկին սահմանված ժամկետում տրամադրելու պարտավորությունը չիրականացնելու դեպքում՝ միանվագ տուգանք 50 000 ՀՀ դրամի չափով:

Հաճախորդի կողմից ֆինանսավորման մարման ուշացումների կամ այլ պայմանագրային պարտավորությունների չկատարման համար Բանկի կողմից կարող են առանձին կոնկրետ ֆինանսավորումների համար սահմանվել այլ տուժանքներ և անբարենպաստ հետևանքներ՝ ներառյալ գործող տոկոսադրույքի փոփոխություն:

Տուժանքի մասին դրույթները և չափերը սահմանվում են Հաճախորդի հետ կնքվող պայմանագրերով/համաձայնագրերով:

Ուշադրություն

Հաճախորդի կողմից մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և «ԱԶՈՎ Քրեդիտ Բեփորթինգ» ՓԲԸ-ին: Վատ վարկային պատմություն ունենալը հետագայում կարող է խոչընդոտել օգտվել Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական գործիքներից:

Պարտավորությունները պայմանագրով սահմանված կարգով չկատարելու դեպքում Բանկն իրավունք ունի առանց դատարան դիմելու բռնագանձել և իրացնել գրավադրված գույքը և գրավի առարկայի իրացումից ստացված միջոցների հաշվին մարել Հաճախորդի պարտավորությունները:

Հաճախորդի վարկային պարտավորությունները մարելու համար գրավի իրացումից ստացված գումարը բավարար չլինելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Հաճախորդի և/կամ երաշխավորի այլ գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ֆինանսավորման տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Նախնական փաստաթղթերի ցանկը ներառում է.

- ԱԶՈՎ-ի Դիմում-հայտ
- Իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրության պատճեն, իսկ անհատ ձեռնարկատիրոջ և ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթուղթ
- Պետական ռեգիստրի կողմից տրված պետական գրանցման վկայականի պատճեն
- ՀՎՀՀ (հարկային կոդ):

Ֆինանսավորման տրամադրման որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Ֆինանսավորման ստացման հայտ
- Վարձակալության պայմանագիր (պատճեն)
- Որպես գրավ առաջարկվող միջոցների (անշարժ գույք, հիմնական միջոցներ, շարժական գույք, ապրանքանյութական արժեքներ և այլն) սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթեր
- Առաջարկվող գրավի գնահատման (վերագնահատման) նախնական ակտ կամ արժեքի որոշման հիմք
- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձնագրեր (անձը հաստատող փաստաթղթեր) և հանրային ծառայությունների համարանիշեր կամ վերջիններս չստանալու վերաբերյալ տեղեկանք
- Ֆիզիկական անձ գրավատուների, երաշխավորների դեպքում՝ վերջիններիս անձնագրերի կամ անձը հաստատող փաստաթղթերի պատճեններ, երաշխավորների համաձայնությունը վարկային պատմության վերաբերյալ հարցումներ կատարելու համար
- Տեղեկանք հարկային տեսչությունից՝ պարտավորությունների վերաբերյալ
- Մասնագետի պահանջով այլ փաստաթղթեր:

Ֆինանսավորման տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Ընդհանուր ժողովի կամ միակ մասնակցի որոշման արձանագրության քաղվածք՝ ֆինանսավորում ստանալու և գրավադրվող գույքի վերաբերյալ
- Որպես գրավ առաջարկվող միջոցների սեփականության հիմք, եթե նախորդ փուլում չի տրամադրվել
- Գրավի ապահովագրության վերաբերյալ փաստաթղթեր, ապահովագրավճարի անդորրագրեր (ապահովագրության պահանջի դեպքում)
- Կադաստրի տարածքային ստորաբաժանումների կողմից տրված միասնական տեղեկանք՝ գրավադրվող գույքի վերաբերյալ
- Տեղեկանք ՊԱՏ-ից գրավադրվող մեքենայի արգելանքի կամ դրա բացակայության վերաբերյալ
- Գործունեության ծավալման վայրի սեփականության կամ վարձակալության վկայականի պատճեն, կամ էլ վարձակալության պայմանագրի պատճեն, կամ հաճախորդի գործունեության վայրի նկատմամբ

իրավունքներ հաստատող այլ հիմք՝ տեղեկանք և այլն, ֆիզիկական անձի դեպքում՝ տեղեկանք (օրինակ՝ գյուղապետարանից) գործունեության վայրի վերաբերյալ

- Բանկի պահանջով՝ գրավադրվող գույքի ձեռքբերման հիմնավորող փաստաթղթերի պատճեններ
- Գյուղատնտեսական վարկերի դեպքում՝ Գյուղապետարանից տեղեկանք:
- Համատիրությունից տեղեկանք՝ ձև 2
- Բաց բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ բաժնետերերի մասին ռեեստրի տեղեկանք:

Կախված Լիզինգի առարկայից՝ կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր

Լիզինգ տրամադրելու դրական որոշման և մերժման գործունեքը

Բանկը Հաճախորդին հակված է տրամադրել ֆինանսավորում, եթե՝

- Հաճախորդը համապատասխանում է տվյալ ֆինանսավորման տեսակի տրամադրման պայմաններին և սահմանափակող դրույթներին:
- Հաճախորդը բանկի պահանջով իր վարկային պարտավորությունը ապահովում է գրավով, երաշխավորությամբ կամ այլ կերպ:
- Հաճախորդը գնահատման արդյունքում ճանաչվում է վարկունակ:
- Հաճախորդի ներկայացրած փաստաթղթերը արժանահավատ են և ներառում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
- Հաճախորդը չունի ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ:

Հաճախորդի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին չհամապատասխանելը կարող է հանգեցնել ֆինանսավորման տրամադրման մերժմանը:

Լիզինգի տրամադրման ժամկետը

Հաճախորդի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը պատշաճ կերպով ներկայացնելուց հետո Լիզինգի հայտի վերաբերյալ որոշումը կայացվում է առավելագույնը 10 օրվա ընթացքում:

Կապ Բանկի հետ

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber: +374 95 511 211
- Skype: conversebank-callcenter